ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«08» փետրվարի 2024 թվականի N 254

ԱՎԱԳԱՆՈՒ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԻՑ ԻՐԱՎԱՍՈՒ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԸՆՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, համաձայն Չարենցավան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 01-ի N 68-Ա որոշմամբ հաստատված Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգի 96-րդ կետի, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ին անցկացվելիք երրորդ նստաշրջանի հերթական թիվ 2 նիստին ներկայացվող նախագծերի քննարկման համար սահմանել իրավասու հանձնաժողովներ.

1.1 Ֆինանսաբյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով

●/նախագիծ 5-Ա / Չարենցավան համայնքի սեփականության 2023 թվականի ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին:

●/նախագիծ 6- Ն/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 104-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

●/նախագիծ 7-Ն/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 98-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին:

●/նախագիծ 8-Ն/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում տեղական տուրքերի 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

●/նախագիծ 9-Ն/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 99-Ն որոշումը չեղյալ ճանաչելու մասին:

●/նախագիծ 10-Ն/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում տեղական վճարների 2024 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին:

1.2. Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով՝

● /նախագիծ 12-Ա / Սոցիալական հատուկ արտոնություններ (այլ դասերին չպատկանող) հատվածից գումար հատկացնելու մասին:

1.3.Քաղաքաշինության, գյուղատնտեսության, բնապահպանության և ենթակառուցվածքների մշտական հանձնաժողով՝

• /նախագիծ 13-Ա/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին:
• /նախագիծ 14-Ա/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվության եղանակով վարձակալին օտարելու համաձայնություն տալու մասին:
• /նախագիծ 15-Ա/ Քաղաքացի Կարեն Գալստյանին հողի հարկի արտոնություն տալու մասին:
/նախագիծ 16-Ա/ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքում նոր առաջացած փողոցը հասցեավորելու մասին:

1.4 Համայնքի զարգացման ռազմավարության և ծրագրերի մշտական հանձնաժողով

• /նախագիծ 17-Ա / Եվրամիության (ԵՄ) կողմից իրականացվող EU4CULTURE նախագծի շրջանակներում Չարենցավան համայնքի «Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված «Արվեստի ամառային ճամբար» (ART SUMMER CAMP) դրամաշնորհային ծրագրի՝ համայնքի բյուջեից վերադարձի պայմանով համաֆինանսավորմանը համաձայնություն տալու մասին:

• /նախագիծ 18-Ա / Եվրամիության (ԵՄ) կողմից իրականացվող EU4CULTURE ծրագրի առաջարկների սահմանափակ կանչին մասնակցելուն, ներկայացվող ծրագրի իրականացումը պատվիրակելուն և համաֆինանսավորումն ապահովելուն համաձայնություն տալու մասին:

1.5. Իրավա-հասարակական հարցերի մշտական հանձնաժողով՝

• /նախագիծ 11-Ա / Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 20-ի N 101-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**